**Լենա Սուլեյմանյան**

# ԸՆՏԱՆԻՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

**Բանալի բառեր** - ժողովրդագրական վիճակ, բնակչության արտահոսք, մարդահամար, վերաբնակեցում, երիտասարդ ընտանիք, սոցիալական վիճակ, բազմազավակություն, նպաստներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվեց արցախահայության համար դժվարին ժամանակահատվածում, ռազմաքաղաքական բարդ պայմաններում: Անկախ պետականության հռչակումը նոր խթան հանդիսացավ Ադրբեջանի ագրեսիային դիմագրավելու, բնակչության անվտանգությունն ու խաղաղ աշխատանքն ապահովելու համար: Հետևաբար, նորանկախ հանրապետությունում ընտանիքի ինստիտուտի կայացմանն ուղղված պետական մոտեցումն ու տարվող քաղաքականությունն անհնար է չդիտարկել մոտ անցյալի փաստերի համադրումով, մանավանդ որ ժողովրդագրական վիճակի բարելավումը հայտարարվել է պետական քաղաքականության գերակայություն և ազգային անվտանգության ապահովման կարևորագույն տարր[1]:

Այսպես, 1923 թ. Ադրբեջան անվանված պետությանը բռնակցված ինքնավար մարզում ի սկզբանե կոպտորեն ոտնահարվում էին մարզի հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Հատկանշական է այն փաստը, որ Ղարաբաղյան շարժման նախորդող և հաջորդող տարիներին Ադրբեջանը պետական մակարդակով օգտագործելով բոլոր հնարավոր տարբերակները՝ արցախահայության դեմ իրականացնում էր էթնիկ զտման քաղաքականություն, որն էլ հանգեցրեց երկրամասի հայաթափման արագացմանը: Եթե նախախորհրդային ժամանակաշրջանում Ղարաբաղի բնակչության զգալի մասը /աշխատունակ, ընտանիքի հայր հանդիսացող երիտասարդ տղամարդիկ/ մեկնում էր հեռավոր վայրեր աշխատելու, ապա ադրբեջանական գաղութատիրության տարիներին մարզից մեկնում էր հիմնականում չամուսնացած երիտասարդությունը՝ սոցիալ-տնտեսական տարրական պայմանների բացակայության պատճառով: Համանման տենդենցները պայմանավորեցին բնակչության «ծերությունը» և դրա հետևանքով ծնելիության մակարդակի կտրուկ նվազեցումը, մահացության մակարդակի բարձրացումը: Երբ 1923 թ. ձևավորվեց ԼՂԻՄ-ը, երկրի բնակչությունը կազմում էր 157.3 հազ. մարդ, որից 149.6 հազ. հայեր և 7.7 հազ. ադրբեջանցիներ: Ինչպես երևում է տվյալներից, հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն: Իսկ ընդամենը մի քանի տարվա ընթացքում 1921-1930 թթ. հայերը թիվը 94.4 տոկոսից նվազեց՝ կազմելով 83.1 տոկոս[2]:

1939 թ. հաշվառման տվյալների համաձայն՝ ԼՂԻՄ ընդհանուր բնակչությունը կազմել է 150.8 հազ. մարդ, որից 132.8 հազ. հայեր, 14.1 հազ.՝ ադրբեջանցիներ,

[1] Տե՛ս http://mss.nkr.am

[2] Տե՛ս aparaj.am, Ս.Ասատրյան, ԼՂ ժողովրդագրական պատկերը Ադրբեջանի վարած բռնաճնշումների ներքո /1923-91թթ./:

մյուս մասը՝ ռուսներ, այլազգիներ: 1939-1979 թթ. բավականին բարձր բնական աճի պայմաններում /չհաշված Մեծ հայրենականում արցախահայերի մասնակցությունը/ մարզի հայ բնակչությունը կրճատվել է մոտավորապես 10 հազարով: Այդպիսի արդյունքները մարզից հայ բնակչության արտահոսքի և ադրբեջանցիների մշտական հոսքի հետևանքներն էին: Բնակչության թվաքանակի և կազմի նմանօրինակ փոփոխությունները շարունակվեցին նաև հետագա տարիներին, ընդհուպ մինչև 1988 թ.: 1989 թ. անցկացված մարդահամարի տվյալներով մարզի բնակչությունը կազմել է 189.1 հազ. մարդ, որից 145.5 հազ-ը կամ 76.9 տոկոսը հայեր, 40.7 հազ-ը կամ 21.5 տոկոսը՝ ադրբեջանցիներ, մնացածը՝ ռուսներ, այլ ազգություններ[1]: Թվերի այս հարաբերակցությունն արդեն պայմանավորված էր Սումգայիթյան և դրան հաջորդած դեպքերի հետ. Ադրբեջանական հայաշատ վայրերից փախստական հայերի որոշ խումբ բնակություն հաստատեց ԼՂԻՄ-ում՝ իր նախկին բնակավայրերում:

Դեռ 1920-ականներից ծխացող Արցախյան շարժումը 1988 թ. հայտնի դեպքերով վճռականորեն մտավ նոր փուլ: Արդեն 1995 թ. բնակչության թվաքանակի ցուցանիշը զգալիորեն նվազել էր՝ կազմելով 122.6 հազ. մարդ: Հաջորդ տարիներին հանրապետության բնակչության թվաքանակի նվազման միտում չի արձանագրվել: 2005 թ. ԼՂՀ-ում առաջին անգամ անցկացված մարդահամարի տվյալներով բնակչության քանակը կազմել է 137.7 հազ. մարդ՝ ընդգծված քաղաքային գերբնակչությամբ[2]**:**

Դրան նպաստել է ԼՂՀ իշխանությունների կողմից ձեռնարկված վերաբնակեցման քաղաքականությունը: 1994թ.-ից ի վեր Արցախի կառավարությունն իրականացնում է «Վերադարձ Արցախ» ծրագիրը: Նպատակն էր՝ վերաբնակեցնել և վերականգնել պատերազմական գործողությունների հետևանքով ամայացած Արցախի տարածքները: Վերաբնակեցման քաղաքականությանը նպաստում էր նաև ԼՂՀ-ում 1997 թ. մշակված ծնելիության և բազմազավակության խթանման ծրագիրը: 1993-2004 թթ.. Լեռնային Ղարաբաղ է տեղափոխվել 7243 ընտանիք՝ թվով 18593 մարդ, որոնց մի մասը բնակություն է հաստատել մայրաքաղաքում, մյուսները՝ շրջկենտրոններում: 2004 թ. հանրապետությունում վերաբնակեցվել է 195 ընտանիք՝ 801 շնչով: 2005 թ. ԼՂՀ-ում վերաբնակեցվել է 127 ընտանիք, 100-ից ավելին հանրապետության շրջաններում, մասնավորապես՝ Շահումյանի, Մարտակերտի և Ասկերանի: 2006 թ. ՀՀ-ից և այլ երկրներից վերաբնակեցվել է 155 ընտանիք՝ 487 անձով: 2007թ. ՀՀ-ից և ԱՊՀ այլ երկրներից ԼՂՀ վերադարձավ 87 ընտանիք՝ 284 շնչով: 2008թ. հանրապետության շրջաններում վերաբնակեցվեց 172 ընտանիք՝ 567 շնչով, որոնցից 88 ընտանիք, կամ 329-ը՝ Քաշաթաղում: 2010 թ. ԼՂՀ է վերադարձել 130 ընտանիք[3]:

Հանրապետությունում սոցիալական և կենսամակարդակային հարցերին լուծում տալու համար՝ պետական բյուջետային ծախսերից բացի, կարևոր տեղ ունի նաև մասնավոր ներդրումը: Առանձնապես պետք է ընդգծել Հայաստանի Հանրապետության դերը: Այդ ներդրումների շնորհիվ 1999 թ. փետրվարի դրությամբ Արցախում

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս www.stat-nkr.am, «Լեռնային Ղարաբաղի հանրապետության ժողովրդագրական ժողովածու», 2015:

[3] Տե՛ս http://armheritage.sci.am, Ա.Առուստամյան, Ժողովրդագրական իրավիճակը և վերաբնակեցման քաղաքականությունը ԼՂՀ-ում /2000-2010թթ./:

վերականգնվել է 3300 բնակարան[1]: Հայաստանի և սփյուռքի օգնությամբ վերականգնվեցին բազմաթիվ ավերված բնակավայրեր, անգնահատելի է նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի հատկապես վերջին տարիների գործունեությունը:

Հասարակության մտածելակերպում և սոցիալական արժեքների համակարգում ընտանիքը զբաղեցնում է ամենակարևոր դիրքը, հետևաբար պետության և հասարակության հատուկ ուշադրության առարկան է: Ոլորտի հիմնական ձեռքբերումն այսօր ամուսնությունների և ծնունդների խրախուսման միջոցով ծնունդների և ամուսնությունների շարունակաբար աճող տեմպի արձանագրումն է: ԼՂՀ-ում ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են ԼՂՀ Սահմանադրությամբ[2], ԼՂՀ-ի ընտանեկան օրենսգրքով, քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով և իրավական ակտերով: Համաձայն «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ»-ի՝ երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտ է նաև երիտասարդ ընտանիքը, այն պայմանով, որ ամուսիններից մեկի տարիքը չգերազանցի 30-ի սահմանը[3]:

Մեր ժամանակներում արցախյան նորաստեղծ կամ երիտասարդ ընտանիքը կայացման և ինքնադրսևորման առումով իր առանձնահատկություններն ունի: Նորաստեղծ ընտանիքներին աջակցելիս պետությունը ելնում է այն հանգամանքից, որ ազգային գենոֆոնդի պահպանումը, նոր սերնդի հոգևոր և ֆիզիկական զարգացումը կախված է երիտասարդ ամուսինների առողջության, սոցիալ-տնտեսական ու կենցաղային պայմաններից, նրանց շրջապատող բնական և հասարակական միջավայրից:

Այսպես, 2005 թ. մարդահամարի տվյալներով հանրապետության 16-30 տարեկան մշտական բնակչության թվաքանակը կազմել է 35 554 մարդ /ընդհանուր բնակչության շուրջ 26 տոկոսը/: 15 և բարձր տարիքի բնակչության 61.4 տոկոսն ամուսնացած է, 25.5 տոկոսը՝ չամուսնացած, իսկ 13 տոկոսը՝ այրի, կնակորույս և ամուսնալուծված: Ընդ որում՝ տղամարդիկ և կանայք չամուսնացածների թիվը հարաբերում են 57.5 և 42.5 տոկոսով: Մինչև 30 տարեկան տղամարդիկ չամուսնացած տղամարդկանց 90 տոկոսն են կազմում, կանայք՝ 88 տոկոսը[4]:

2008 թ. ԼՂՀ-ում պետականորեն խրախուսվում են ամուսնությունները, խթանվում բազմազավակությունը, բարձրացվել է մայրության և ընտանիքի դերը հասարակության մեջ, ինչն իրականացվում է կյանքի կոչված այնպիսի ծրագրերով, ինչպիսիք են չաշխատող կանանց համար հղիության և ծննդաբերության նպաստների սահմանումը, ամուսնության և ծննդյան միանվագ նպաստների տրամադրումը, ծնելիության և բազմազավակության խթանման ծրագիրը և այլն[5]:

2008 թ. հոկտեմբերի 16-ը արցախահայության պատմության մեջ մտավ որպես աննախադեպ միջոցառում՝ Արցախյան Մեծ հարսանիքի օր: Արցախյան Մեծ հար-

---

[1] Տե՛ս http://lraber.asj-oa.am, Հ. Աբրահամյան, Բնակչության սոցիալական պաշտպանվածության հարցերը Արցախում /2000-2006թթ./:

[2] Տե՛ս ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 38:

[3] Տե՛ս ԼՂՀ կառավարության «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության թիվ 26 նիստի արձանագրային որոշումը, 28 հոկտեմբերի, 2008թ.:

[4] Տվյալները ներկայացվում են ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդության հարցերի բաժնի արխիվային փաստաթղթերի հիման վրա:

[5] Տե՛ս http://mss.nkr.am

սանյաց հանդիսավոր տոնախմբությամբ բնակչության շուրջ մեկ տոկոսը, այսինքն 1400 մարդ պաշտոնապես գրանցել են իրենց ամուսնությունը: Արդյունքում 2008 թ. ամուսնության թիվը նախորդ տարվա համեմատ աճել է վեց անգամ: Իրականացված ծրագրերի շնորհիվ 2009 թ. հանրապետությունում գրանցվել է 947 ամուսնություն. անկախությունից հետո ամենաբարձր թիվն է:

2010 թ. հանրապետությունում առաջին անգամ կատարվել է նոր ստեղծված ընտանիքների կենսապայմանների հետազոտություն՝ ընդգրկելով 2008-2009 թթ. գրանցված 4004 ամուսնական զույգերի[1]: Հետազոտության արդյունքներից պարզվում է, որ ամուսնական զույգերի կառուցվածքում գերակշռում են 18-29 տարիքային խմբի ներկայացուցիչները:

Հարցման արդյունքներով նորաստեղծ ընտանիքների առաջնահերթ խնդիրներ են հանդիսանում աշխատանքով և բնակարանով ապահովվածությունը: Աշխատանքով ապահովվելու խնդիրներ ունեցողները շատ էին Ստեփանակերտում, Ասկերանի և Շուշիի շրջաններում:

Հասարակության զարգացման օրինաչափ փոփոխությունները հանգեցրել են այն բանին, որ նախկինում ավանդական ընտանիքը /գյուղաբնակ, բազմանդամ, բազմազավակ/ իր տեղը զիջում է քաղաքաբնակ, մեկ-երկու երեխա ունեցող ընտանիքին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ պլանավորած երեխաների թվաքանակի կառուցվածքում քաղաքաբնակ ընտանիքներում նվազում է, իսկ գյուղական բնակավայրերում, ընդհակառակը, կշիռն ավելանում է պլանավորած երեխաների աճին զուգընթաց:

Ամուսնական զույգերի մեծամասնության՝ 52.5 տոկոսի համար քիչ երեխաներ պլանավորելու պատճառ է դարձել առողջական վիճակը, ընդ որում քաղաքաբնակների մեջ այն կազմել է 47.7 տոկոս, իսկ գյուղաբնակներինը՝ 60.8 տոկոս: 20.6 տոկոսի համար պատճառը ֆինանսական, բնակարանային խնդիրները և աշխատանքի բացակայությունն է: Ուշագրավ է նաև այն փաստը, որ հետպատերազմյան շրջանում նորաստեղծ ընտանիքները վերարտադրողական առողջության առումով լուրջ խնդիրներ ունեն:

Բանկերի կողմից տրվող հիպոթեքային վարկերի բարձր տոկոսադրույքների և մարման ժամկետների պատճառով բնակարանի ձեռքբերումը անհասանելի է հասարակության մեծամասնությանը, հատկապես՝ երիտասարդությանը: Հետազոտված նորաստեղծ ընտանիքներից ծրագրից օգտվել էր 6.1 տոկոսը: Բոլորը նշել են ֆինանսական միջոցների բացակայությունը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հետպատերազմյան շրջանում արցախյան նորաստեղծ ընտանիքի լիարժեք կենսագործունեության համար առաջնահերթ խնդիր է աշխատանքի և բնակարանի առկայությունը: Ի դեպ, մայրաքաղաքի, շրջանների, հատկապես՝ ծայրամասային սահմանամերձ գյուղերի ընտանիքների բնակարանային և զբաղվածության խնդիրները տարբերվում են. դրանց լուծմանը ցուցաբերվում է տարբերակված մոտեցում:

[1] Տե՛ս www.stat-nkr.am, «Նոր ստեղծված ընտանիքների կենսապայմանների ընտրանքային հետազոտություն» զեկույց, 2010:

Արդեն 2015 թ.-ից մեկնարկեց նոր ծրագիր, որի համաձայն հանրապետության գյուղական բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին՝ բնակելի տներ կառուցելու նպատակով տրամադրվում է անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ մինչև 3 մլն դրամ գումարի սահմաններում[1]:

Վերջին տարիների ընթացքում Արցախի պետական բյուջեն ունեցել է վառ արտահայտված սոցիալական ուղղվածություն: Բյուջետային միջոցների հաշվին իրականացվել են սոցիալական բնույթի տարբեր ծրագրեր: Մասնավորապես, ծննդյան նպաստներն աճել են՝ 2007 թ. 77.0 մլն դրամից 2011 թ.-ին 800 մլն դրամի[2]:

Այսպիսով, միջազգայնորեն չճանաչված, հակամարտության պայմաններում գտնվող հանրապետությունում ընտանիքի ինստիտուտի կայացմանն ուղղված կարևոր միջոցներ են ձեռնարկվում, որի տեսանելի արդյունքը փաստում են վերջին վիճակագրական տվյալները. 2014 թ. հանրապետությունում գրանցվել է 1412 ամուսնություն /նախորդ տարվա համեմատ աճել է 450-ով/, 212 ամուսնալուծություն: Ամուսնության միջին տարիքը տղամարդկանց շրջանում կազմել է 28.2, իսկ կանանց մոտ՝ 24.6 տարեկան: Նույն ժամանակահատվածում արձանագրվել է 2439 ծնունդ, որից 13-ը՝ բազմապտուղ: Ծնվածների ընդհանուր թվաքանակից 2428-ը կազմել են կենդանի ծնվածները, 11-ը մեռելածիններ: Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ կազմել է 26.8 տարեկան, առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 24.2:

2015 թ. ընթացիկ հաշվառման տվյալներով հանրապետությունում ապրում է 148.9 հազ. մարդ: ԼՂՀ բնակչության 56.8 տոկոսը քաղաքաբնակ է, 43.2 տոկոսը՝ գյուղաբնակ[3]:

**Лена Сулейманян, Предпосылки становления института семьи в НКР, -** Улучшение демографического состояния в НКР было объявлено приоритетом государственной политики и важнейшим элементом обеспечения национальной безопасности. Основным достижением в данной сфере сегодня является регистрация непрерывно растущего темпа рождений и браков посредством поощрений, а также обеспечение жилищных и бытовых условий для молодых семей.

**Lena Suleymanian, Premises for the Family Institution Development in NKR, -** The improvement of demographic situation in the NKR was declared to be a state policy priority and an essential element of national security. Today the main achievement in this field is the record of continuously growing rate of births and marriages through encouragement, as well as providing housing and living conditions for young families.

**Լենա Սուլեյմանյան** - Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոս:

[1] Artsakhpress.am

[2] ԼՂՀ նախագահի թեկնածու Բ.Սահակյանի նախընտրական ծրագիր, էջ 26-27, 19 հուլիսի 2012թ.:

[3] Տես՝ www.stat-nkr.am, «Լեռնային Ղարաբաղի հանրապետության ժողովրդագրական ժողովածու», 2015: